ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«02» 10 2024 թ.
№ ՊՆՆՏ-Գ/Ս/-1510

«ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 02280455
ՀՀ, ք.Երևան, Մալխի 9 30/2
հեռ. 091-01-02-03

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերության միջև 04.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/4-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1 474 937,44 ՀՀ դրամի քիմիական և լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ), որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան Ընկերության կողմից ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 39 օր) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հոկտեմբերի 1-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 34 976 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 53 719 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 23.08.2024թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 769 583 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 1 154 374 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 769 583 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 1 154 374 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ